

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2020 թ. փետրվարի 10-ին կայացած թիվ 6 նիստի

Գիտական խորհրդի 41 անդամներից հարցմանը մասնակցել են 32-ը:

Օրակարգում՝

- Որակի ապահովման մշտական հանձնաժողովի հաշվետվությունը մագիստրոսական կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի վերաբերյալ (գեկուցող՝ Է.Ս. Գևորգյան):
- ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Մարինե Աշոտի Փարսադանյանի դոկտորական ատենախոսության թեմայի և գիտական խորհրդատուի առաջադրման հարցը:
- Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:
- Ուսումնական ձեռնարկի /գրքի/ տպագրման երաշխավորման հարցը:
- Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ՝ Որակի ապահովման մշտական հանձնաժողովի հաշվետվությունը մագիստրոսական կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի վերաբերյալ:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Է. Ս. Գևորգյանը, ով մանրակրկիտ ներկայացրեց ֆակուլտետում գործող 6 մագիստրոսական կրթական ծրագրերի մշտադիտարկումների արդյունքները, նշելով յուրաքանչյուր ծրագրի քանակական բնութագրերը: Նա արձանագրեց որ, աշխատանքները սկսվել են ընթացիկ մոնիթորինգի խմբերի ստեղծմամբ: Հաշվետվությունը կազմվել է ֆոկուս խմբային հարցման արդյունքների հիման վրա: Ելույթում ամփոփված էին ուսանողների, շրջանավարտների, ինչպես նաև ծրագրերի շահակիցների հարցումների արդյունքները: Նշվեց, որ ընդհանուր առմամբ, բոլոր ՄԿԾ-ները այս կամ այն չափով բավարարում են աշխատաշուկայի պահանջներին: Կրթական ծրագրերի իրականացման ընթացքում մագիստրանտների խորը գիտելիքների ձեռքբերմանը և կիրառական հմտությունների ձևավորմանը նպաստել է նաև ամբիոնների գիտական սերտ համագործակցությունը հայաստանյան և արտասահմանյան գիտական կազմակերպությունների հետ: Է. Ս. Գևորգյանի կողմից ամփոփ ձևով ներկայացվեցին յուրաքանչյուր ՄԿԾ-ի շրջանակներում իրականացվող առավել կարևոր գործընթացները և դրական

միտումները: Որպես բացասական գործոն նշվում է բակալավրիատի համակարգում ուսանողների թվի կրճատում:

Քննարկումներին մասնակցեց Որակի ապահովման մշտական հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ռ.Մ. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հավանության արժանացնել ֆակուլտետում գործող 6 մագիստրոսական կրթական ծրագրերի մշտադիտարկումների արդյունքները:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Մարինե Աշոտի Փարսադանյանի դոկտորական ատենախոսության թեմայի և գիտական խորհրդատուի առաջադրման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Է. Ս. Գևորգյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ, պրոֆ. Պ.Հ. Վարդևանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել կենսաֆիզիկայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Մարինե Աշոտի Փարսադանյանի դոկտորական ատենախոսության թեման «Տարաբնույթ լիզանդների փոխազդեցությունը ՌՆԹ-ի հետ», Գ.00.02 «Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ և գիտական խորհրդատու հաստատել կ.գ.դ, պրոֆ. Պ.Հ. Վարդևանյանին:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ Լուսինե Արսենի Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Է. Ս. Գևորգյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ., Կ.Ա. Թռչունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել Լուսինե Արսենի Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Երկկարբոնաթթուների տեղափոխիչների դերը Escherichia coli-ում ածխածնի տարբեր աղբյուրների խմորման պայմաններում» Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ և գիտական ղեկավար հաստատել կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Թռչունյանին:

ԼՄԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի հեռակա ասպիրանտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության ամբիոնի լաբորատորիայի վարիչ՝ Մարգարիտա Մարգարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ. դոցենտ, Ա. Ֆ. Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել Մարգարիտա Մարգարյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Մարզիկների սրտի ռիթմի տատանողականության գնահատման առանձնահատկությունները» Գ.00.09 «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» մասնագիտությամբ և գիտական ղեկավար հաստատել բ.գ.դ., պրոֆեսոր Մ.Գ. Աղաջանյանին:

ԼՄԵՑԻՆ՝ Հայ-Ռուսական Սլավոնական համալսարանի կենսաինժեներիայի, կենսաինֆորմատիկայի և մոլեկուլային կենսաբանության ամբիոնի ասպիրանտ Նարեկ Աբելյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ, պրոֆ. Ա. Հ. Թոչունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել Նարեկ Աբելյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Մանրէների քվորում-սենսինգ համակարգի պոտենցիալ արգելակիչների որոնումը», Գ.00.02 «Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ և գիտական ղեկավար հաստատել կ.գ.թ, դոցենտ Ա.Ա. Հովհաննիսյանին:

ԼՄԵՑԻՆ՝ ԵՊՀ Գենետիկայի և բջջաբանության ամբիոնի կողմից ներկայացրած Թ. Լիբի, Տ. Հարությունյանի, Գ. Հովհաննիսյանի «Մարդու գենետիկայի հիմունքները» ուսումնական ձեռնարկի հրատարակման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Ս. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել Թ. Լիլի, Տ. Հարությունյանի, Գ. Հովհաննիսյանի «Մարդու զենետիկայի հիմունքները» ուսումնական ձեռնարկը հրատարակման:

- Գիտական խորհրդի նիստի ժամանակ քննարկվել են նաև որոշ ընթացիկ հարցեր:
1. Սույն թվականի մարտի 4-6-ը «Կրթություն և կարիերա էքսպո 2020» 20-րդ հոբելյանական միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին ֆակուլտետի մասնակցության հարցը:
 2. Երևանի պետական համալսարանի ինստիտուցիոնալ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան ինքնավերլուծության գործընթացն իրականացնող աշխատանքային խմբերի ստեղծման հարցը:
 3. Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ ազգությամբ հայ գիտնականների մասին տեղեկություններ ներկայացնելու հարցը:

Ներկայացվում են նաև գիտական խորհրդի 2019 թ. դեկտեմբերի 20-ի թիվ 4 և հունվարի 31 թիվ 5 հարցման կարգով անցկացվող նիստերի արձանագրությունները:

Օրակարգ՝

1. ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի և գիտական հետազոտությունների աջակցության Եվրասիական ասոցիացիայի հետ համատեղ բազմակողմ ծրագրերի աջակցության միջազգային մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացրած նախագծի երաշխավորության հարցը:
2. «Կենսաբանություն» կրթական ծրագրի վերջնարդյունքներին համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջների ցանկի հաստատման հարցը:

ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի և գիտական հետազոտությունների աջակցության Եվրասիական ասոցիացիայի հետ համատեղ բազմակողմ ծրագրերի աջակցության միջազգային մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացրած նախագծի երաշխավորության հարցը:

ԵԼՈՒՅԹ ՌԻՆԵՑԱՆ՝ Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ. դոցենտ Աննա Ֆելիքսի Կարապետյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ինեսա Մակեդոնի Էլոյանը, Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Հովիկ Հարությունի Փանոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել հետևյալ նախագծերը՝

- Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ. դոցենտ Աննա Ֆելիքսի Կարապետյանի առաջարկած «Փոխհատուցողական և հարմարվողական ռեակցիաների մոլեկուլազենետիկական և բջջային մեխանիզմները մոդելային տեսակների կենդանիների պոպուլյացիաներում միջավայրի մարդածին աղտոտվածության պայմաններում» նախագիծը:
- Բուսաբանության և սնկաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ինեսա Մակեդոնի Էլոյանի առաջարկած «Կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում օօմիցետների *Phytophthora* ցեղի ինվազիվ տեսակները Արևելյան Եվրոպայի, Սիբիրի և Կովկասի տարածաշրջանի բնափայտային բույսերի բնական աճելավայրերում և արհեստական ֆիտոցենոզներում» նախագիծը:
- Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Հովիկ Հարությունի Փանոսյանի առաջարկած «Եվրասիական էկոհամակարգերի բժշկական տեսանկյունից կարևոր բույսերի և քարաքոսերի և դրանց էնդոֆիտների բազմազանությունն ու կենսատեխնոլոգիական ներուժը» նախագիծը:

ԼՄԵՑԻՆ՝ «Կենսաբանություն» կրթական ծրագրի վերջնարդյունքներին համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջների ցանկի հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան Է.Ս. Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջների ցանկը:

Օրակարգ՝

1. Անվանական կրթաթոշակների շնորհման հարցը՝ Ստեփանյան Տաթևիկ 1 կ. մագ. և Խալաթյան Սաթենիկ 4 կ. կենս.


ԼՄԵՑԻՆ՝ Լևոն Օրբելու և Նորայր Սիսակյանի անվան անվանական կրթաթոշակների շնորհման հարցը:

ԵԼՈՒՑԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան Է.Ս. Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Լևոն Օրբելու անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել կենսաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Տաթևիկ Արսենի Ստեփանյանին, Նորայր Միսակյանի անվան կրթաթոշակը՝ կենսաբանության ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանողուհի Մաթենիկ Մխիթարի Խալաթյանին՝ հաշվի առնելով նրանց բարձր առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
դոցենտ՝



Ի.Վ. Շահազիզյան